Հավելված N 530
ՀՀ էկոնոմիկայի նախարարության
գլխավոր քարտուղարի
2019 թ.հուլիսի 26-ի N 636-Ա հրամանի

# ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ

## ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱԳԵՏ

### 1.Ընդհանուր դրույթներ

**1.1. Պաշտոնի անվանումը, ծածկագիրը**

Էկոնոմիկայի նախարարության տնտեսական հետազոտությունների վարչության (այսուհետ՝ Վարչություն) մակրոտնտեսական հետազոտությունների բաժնի (այսուհետ՝ Բաժին) գլխավոր մասնագետ (ծածկագիրը՝ 23-32.24-Մ2-1)

**1.2. Ենթակա և հաշվետու է**

Բաժնի գլխավոր մասնագետն անմիջական ենթակա և հաշվետու է Բաժնի պետին:

**1.3. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները**

Բաժնի գլխավոր մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Բաժնի ավագ մասնագետը կամ Բաժնի պետը:

**1.4. Աշխատավայրը**

Հայաստան, ք. Երևան, Կենտրոն վարչական շրջան, Միհեր Մկրտչյան N 5

### 2. Պաշտոնի բնութագիր

**2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները**

1. իրականացնում է արդիական գիտական հենքի հիման վրա մակրոտնտեսական հետազոտություններ, վերլուծություններ և մշտադիտարկումներ, տնտեսական ազդեցությունների գնահատման աշխատանքներ,
2. իրականացնում է էկոնոմետրիկ և կառուցվածքային մոդելների կառուցման, դրա հիման վրա համապատասխան գնահատումների հետ կապված աշխատանքները,
3. իրականացնում է բազմավեկտոր խորքային տնտեսական հետազոտությունների և վերլուծությունների միջոցով տնտեսական զարգացման ռազմավարական ուղենիշերի նախանշման աշխատանքները,
4. իրականացնում է տեղական և միջազգային գիտահետազոտական ինստիտուտների, հետազոտական կենտրոնների և կազմակերպությունների հետ համագործակցության ուղղությամբ աշխատանքները,
5. Նախարարության այլ ստորաբաժանումների հետ համատեղ, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում ՀՀ շահագրգիռ նախարարությունների և գերատեսչությունների հետ համագործակցելով իրականացնում է Վարչության գործունեության ոլորտին վերաբերող օրենքների և իրավական ակտերի նախագծերի մշակման աշխատանքները:

**Իրավունքները՝**

• ստանալ անհրաժեշտ տեղեկատվություն արդիական գիտական հենքի հիման վրա մակրոտնտեսական հետազոտություններ, վերլուծություններ և մշտադիտարկումներ, տնտեսական ազդեցությունների գնահատման աշխատանքների իրականացման համար,
• ստանալ անհրաժեշտ տեղեկատվություն էկոնոմետրիկ և կառուցվածքային մոդելների կառուցման, դրա հիման վրա համապատասխան գնահատումներ վերաբերյալ կարծիքներ և առաջարկություններ,
• ստանալ բազմավեկտոր խորքային տնտեսական հետազոտությունների և վերլուծությունների միջոցով տնտեսական զարգացման ռազմավարական ուղենիշերի նախանշման աշխատանքները,
• Ստանալ տեղեկատվություն տեղական և միջազգային գիտահետազոտական ինստիտուտների, հետազոտական կենտրոնների և կազմակերպությունների հետ համագործակցության ուղղությամբ աշխատանքների վերաբերյալ,
• առնչվել իր գործառույթների իրականացման համար անհրաժեշտ տեղեկատվությանը,
• մասնակցել այլ մարմիններում կազմակերպվող քննարկումներին, նիստերին:

**Պարտականությունները՝**

• ուսումնասիրել և վերլուծել արդիական գիտական հենքի հիման վրա մակրոտնտեսական հետազոտությունների, վերլուծությունների և մշտադիտարկումների աշխատանքները
• ուսումնասիրել և վերլուծել էկոնոմետրիկ և կառուցվածքային մոդելների կառուցման, դրա հիման վրա համապատասխան գնահատումներ վերաբերյալ ստացված կարծիքները և առաջարկությունները
• վերլուծել տնտեսական զարգացման ռազմավարական ուղենիշերի մշակման վերաբերյալ տեղեկատվությունը,
• մշակել տնտեսական զարգացման ռազմավարական ուղենիշեր,
• մշակել տեղական և միջազգային գիտահետազոտական ինստիտուտների, հետազոտական կենտրոնների և կազմակերպությունների հետ համագործակցության ուղղությամբ նախապատրաստական աշխատանքները,
• մշակել իրավական ակտերի նախագծեր, նախապատրաստել զեկույցներ, շնորհանդեսներ:

## 3. Պաշտոնին ներկայացվող պահանջներ

### 3.1. Կրթություն, որակավորման աստիճանը

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 1 | **Ուղղություն** | Սոցիալական գիտություններ, լրագրություն և տեղեկատվական գիտություններ | Գործարարություն, վարչարարություն և իրավունք | Բնական գիտություններ, մաթեմատիկա և վիճակագրություն | |
| 2 | **Ոլորտ** | Սոցիալական և վարքաբանական գիտություններ | Գործարարություն և վարչարարություն | Մաթեմատիկա և վիճակագրություն | |
| 3 | **Ենթաոլորտ** | Տնտեսագիտություն | Ֆինանսներ | Միջոլոր-տային | Վիճակագ-ություն |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | մասնագի-տություններ | |
| 4 | **Մասնագի-տություն** | | | Ֆինանսական մաթեմատիկա | |

**3.2. Մասնագիտական գիտելիքները**

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ

**3.3. Աշխատանքային ստաժ, աշխատանքի բնագավառում փորձը**

Հանրային ծառայության առնվազն երկու տարվա ստաժ կամ երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ տնտեսագիտության բնագավառում՝ երեք տարվա աշխատանքային ստաժ:

**3.4. Անհրաժեշտ կոմպետենցիաներ**

**Ընդհանրական կոմպետենցիաներ՝**

1. Ծրագրերի մշակում
2. Խնդրի լուծում
3. Հաշվետվությունների մշակում
4. Տեղեկատվության հավաքագրում, վերլուծություն
5. Բարեվարքություն

**Ընտրանքային կոմպետենցիաներ՝**

1. Ժամանակի կառավարում
2. Ելույթների նախապատրաստում և կազմակերպում
3. Փոփոխությունների կառավարում
4. Ժողովների և խորհրդակցությունների կազմակերպում
5. Փաստաթղթերի նախապատրաստում

**4. Կազմակերպական շրջանակ**

**4.1. Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը**

Պատասխանատու է կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների բնույթով պայմանավորված մասնագիտական գործունեության անմիջական արդյունքի համար:

**4.2. Որոշումներ կայացնելու լիազորությունները**

Կայացնում է որոշումներ աշխատանքների իրականացման բնույթով պայմանավորված մասնագիտական եզրակացությունների տրամադրման և ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում որոշումների կայացման շրջանակներում:

**4.3. Գործունեության ազդեցությունը**

Ունի տվյալ մարմնի նպատակների և խնդիրների իրականացման արդյունքների ապահովման մասնագիտական գործունեության որոշակի ոլորտին վերաբերող համապետական ազդեցություն:

**4.4. Շփումները և ներկայացուցչությունը**

Իր իրավասությունների շրջանակներում շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս տվյալ մարմնի ներսում այլ կառուցվածքային ստորաբաժանումների, այլ մարմինների ներկայացուցիչների հետ, հանդես է գալիս պետական մարմինների և միջազգային

կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ ձևավորված աշխատանքային խմբերում:

**4.5. Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը**

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում է մասնագիտական խնդիրներ և այդ խնդիրներին տալիս է մասնագիտական լուծումներ և մասնակցում է կառուցվածքային ստորաբաժանման առջև դրված խնդիրների լուծմանը: